ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 60-Ա
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2021 թ մայիսի 7-ի N02/45.1/14974-2021 գրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի մարտի 14-ի N12 որոշմամբ հաստատված «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի» կանոնադրությունում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Կանոնադրության ամբողջ տեքստում «մարզպետարանի Աշխատակազմ» բառերը փոխարինել «մարզպետարան» բառերով, «աշխատակազմի ղեկավար» բառերը՝ «գլխավոր քարտուղար» բառերով
2. 4-րդ բաժնի գործառույթները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

5/17/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ մայիսի 17-ի
N60-Ա որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի կանոնադրության 4-րդ բաժնի նոր խմբագրություն

«1.Բաժինն իր հիմնական խնդիրներին և նպատակներին համապատասխան՝

1) կազմակերպում է մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների իրականացումը.

2) կազմակերպում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը.

3) համագործակցում է հանրապետության զորահավաքային աշխատանքները համակարգող լիազոր մարմնի, պետական կառավարման այլ մարմինների, ինչպես նաև այլ մարզերի զորահավաքային մարմինների հետ.

4) մասնակցում է մարզի զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրերի կնքման և դրանց կատարման նկատմամբ վերահսկման աշխատանքներին.

5) իրականացնում է զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին տարածքային կառավարման մարմնի մասնակցության նախապատրաստության ապահովումը.

6) իրականացնում է տարածքային կառավարման մարմնի կողմից պաշտպանության նպատակով մարզի վարչական տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումների կատարման ու զինված ուժերի զորահավաքային ծավալմանն աջակցության ապահովման գործընթացին մասնակցությունը.

7)կազմակերպում է տարածքային կառավարման մարմնի կողմից մարզի վարչական տարածքի օպերատիվ սարքավորմանը մասնակցության ու դրա իրագործմանն օժանդակման գործընթացին աջակցությունը.

8) իրականացնում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատող պահեստազորայինների ամրագրման աշխատանքների ապահովումը, նրանց զինվորական հաշվառման, պահեստազորային պատրաստության միջոցառումներին, պարտադիր զինվորական ծառայության և զորահավաքային զորակոչերին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքները զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ.

9) կազմակերպում է խաղաղ և ռազմական դրության ժամանակ օրենքով սահմանված կարգով մարմնին ենթակա մարմինների, ստորաբաժանումների զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև համակարգման ոլորտում գտնվող՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի պայմաններում զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպությունների՝ զորահավաքային պատվերների կատարման պայմանագրերով նախատեսված զորահավաքային միջոցառումների կատարման աշխատանքները.

10) կազմակերպում է «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով տարածքային կառավարման մարմինների համար սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը.

11) առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության հարցերով անձնակազմի նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ,

12) Մարզպետին, գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն.

13) իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված զորահավաքային նախապատրաստության պատրաստության հետ կապված այլ գործառույթներ:

հետ կապված այլ գործառույթներ:»